# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան 1-ի մաս, կենտ.փ շ.1, Հեռ.
(098)048046 ,

N 03-21
*31 հունվար 2014թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2014թ. հունվարի 29-ի թիվ 1-Ն, 2-6 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2014թվականի N 1-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետով.

1.Համաձայնություն տալ Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանները և անհատական բնակելի տները բնակիչներին օտարելու համար;

2.Սահմանել Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանների և անհատական բնակելի տների օտարման գների չափը.

1)Բազմաբնակարան շենքերի բնակարանների մեկ քմ արժեքը `1000 դրամ

2)Անհատական բնակելի քարե տների մեկ քմ արժեքը ` 3000 դրամ

3)Անհատական բնակելի փայտե տների մեկ քմ արժեքը ` 500դրամ

3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2009թ.օգոստոսի 28-ի թիվ 26-Ն որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԵՅՐԱՆ
4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2014թվականի N 2

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 53 հոդվածով.

1.Համայնքի ղեկավարին `2014թ.ընթացքում իրականացնել հետևյալ ծրագրերը.

1)Միջոցներ ձեռնարկել <<Հայջրմուղկոյուղի>>ՓԲԸ տնօրինության հետ միասին իրականացնելու Թումանյան քաղաքի 2-րդ թաղամասի ջրատարի տեղափոխման աշխատանքները.

2)Կազմակերպել Թումանյան քաղաքի 8-րդ փողոցի բարեկարգման և փողոցի հարակից տարածքի ասֆալտապատման աշխատանքները:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ

3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԵՅՐԱՆ

4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 հունվարի 2014թվականի N 3-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2013թ.դեկտեմբերի 18-ի<<Թումանյան համայնքի 2014թ. բյուջեն հաստատելու մասին >> թիվ 49-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչ Սուրեն Սիմոնի Շահվերդյանի դիմումը.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացուն տրամադրել դրամական օգնություն .

1) Շահվերդյան Սուրեն Սիմոնի - 20000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Հերմինե Հովսեփյանին լիազորել՝ Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ

3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԵՑՐԱՆ

4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2014թվականի N 4-Ա

## ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ գույքահարկի մասին օրենքի 15 հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թումանյան քաղաքի բնակչուհի, սոցիալապես անապահով Լիդա Մկրտչյանին ազատել անհատական օգտագործման ավտոմեքենայի գույքահարկի վճարումից.

-հարկատուի գրանցման և գույքի գտնվելու վայրը՝ ք. Թումանյան

-ՀՎՀՀ 13697903

-արտոնության գումարի մեծությունը՝ 8000դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ

2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ

3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԵՅՐԱՆ

4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2014թվականի N 5-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎՈԼՈԴՅԱ ԱՐՏԱՇԵՍԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԵՖ ԴԱՍՏԻԱՐԱԿ ԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի պետ,ոստիկանության գնդապետ Ա.Վ.Հարությունյանի 20.01.2014թ. թիվ 60/3-260 գրությունը.

Թումանյան քաղաքի բնակիչ Վոլոդյա Արտաշեսի Թումանյանի վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով , Թումանյան համայնքի ավագանի Մարտուն Պետրոսյանին կցել շեֆ դաստիարակ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԵՅՐԱՆ
4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2014թվականի N 6

## ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը>> հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կարծիքը, համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Թումանյան քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության լրամշակված տարբերակին՝ Թումանյան քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0048-0002 ծածկագրի 0.30194 հա գյուղատնտեսական նշանակության այլ /անօգտագործելի/ հողատեսքը, քարտեզագրման սխալի ուղղման նպատակով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործի լրամշակված տարբերակը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ